ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«14» 11 2022 թ.

N 631

Հասցե ՀՀ, ք Վանաձոր, Նժդեհի 2/42
Հեռ. (+374322) 2-02-86
էլ. փոստ vanmedicalcenter@mail.ru, կայք www.vanmc.am

«ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ
/Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին/

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի փետրվարի 22-ին կնքվել է ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/19-6 ծածկագրով Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի մատակարարման պայմանագիրը /այսուհետ՝ Պայմանագիր/:

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 10.10.2022 թ. «ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊԸ-ին էլ. փոստով պատվեր է տրվել Պայմանագրի բոլոր չափաբաժինների համար՝

Չափաբաժնի համար	Անվանում	Չափման միավոր	Պատվեր 10.10.2022 թ.
13	Մերոպենեմ եռհիդրատ 500 մգ	ֆլ	10
28	Պակլիտաքսել 6 մգ/մլ 100 մլ	ֆլ	20
75	Ցեֆեպիմ հիդրոքլորիդ (մոնոհիդրատ) 100 մգ	ֆլ	100
91	Օքսալիպլատին 100 մգ	ֆլ	15

Սահմանված ժամկետում նշված չափաբաժիններից կենտրոնին դեղորայք չի մատակարարվել:

01.11.2022 թ. Պայմանագրի 2.1.5 կետի համաձայն նոր մատակարարման ժամկետ սահմանելուց հետո /7 օրացույցային օր/ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն չափաբաժիններից որևէ մեկը կրկին չի ստացել:

Պայմանագրի Հավելված N 1-ով (Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց, Ծանոթություն բաժին) սահմանված է, որ մատակարարումը կատարվելու է ըստ նախապես ներկայացված պատվերի, ինչը սահմանված է եղել նաև 27 հունվարի 2022 թ. ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/19 ծածկագրով գնանշման հարցման հրավերով:

Հաշվի առնելով վերոնշյալը և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի) «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «ՎԱԳԱ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի միջև 2022 թվականի փետրվարի 22-ին կնքված ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/19-6 ծածկագրով կենտրոն կարիքների համար դեղորայքի մատակարարման պայմանագիրը:

Սահմանված կարգով կկիրառվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը:

Սույն ծանուցումը 14.11.2022 թվականին կհրապարակվի gnumer.am կայքով:

ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

ՏՆՕՐԵՆ՝ Վ. ՄԿՐՏՉՅԱՆ